

ըու յթի վերապրուկների և դրանց վերահմաստավորման վերաբերյալ : Նյութերը տարածված են Հայստանի հիմական պատմա-ազգագրական շրջաններում :

Ավանդական զրույցների մի շարք՝ հիշյալ սովորույթը ներկայացնում է իրեն վաղուց ի վեր հաստաված իրողություն, որը սակայն վերացվում է հոգեկան, անձնական-անհատական գործոնի ազդեցությամբ/որդին հոր ակնարկից հասկանում է, որ իրեն էլ նույն առաջան է սպասում/:

Սովորույթի վերացումը մի խումբ հեթիաթներում պատմառքանվում է մեծա հասակների փորձի ու իմացության անհրաժեշտությամբ /հայրն իր գաղտնարանից խելացի խորհուրդներ է առլիս որդուն, որը փորկում է երկիրը/:

Խնդրու առարկա սովորույթը հասարակական գարգացման ու ընթանեկան ազգակցական կապերին զուգահեռ վերանում է, վերապրուկները միաձու լվում են ներընառանեկան փոխարաքերությունների հետ և ստանում զուտ քարոյա-խրառական գունավորում /մեծա հասակ հորը, երբեմն նաև մորը շնարգող - չհնազանդվողը պատժվում է թե նյութապես, թե քարոյապես/:

#### Ժ.Կ.ԽԱՉԱՏՐՅԱՆ

ԴԻՎԱՆԱՐՈՒԹՅԱՆ ԴԱՐՄԱՆՈՒՄԸ ՊԱՐՈՎ՝,, ԽԱՂԱՑՅԱԿ,,

Հավատալիքների մեջ շատ լայն տարածում է ունեցել դիվանարությունը և նրա դարմանման ժողովրդական տարբեր միջոցները

Դիվանարությունը կապվում է հոգու պաշտամունքի և ոգիների՝ հիվանդություններ ու մահ պատմառելու,, կարողության,, հետ, որը զալիս է անհիմիստական ըմբռնումների մևքորման ժամանակներից: Ըստ այդ մտածելակերպի, քոլոր հիվանդները համարվում են շաքերի կողմից քոնվածներ, այսինքն դիվանարներ:

Դիվանարությունն ունեցել է որոշակի ախտանիշներ և ըուժման տարբեր եղանակներ: Դիվանարության դարմանման եղանակի մի տարբերակ պահպանվել է Հայստանի պատմա-ազգագրական մի շարք շրջաններում: Հայ գեղարվեստական և ազգագրական գրականու-

թյան մեջ բազմաթիվ տեղեկություններ կան Զանգեզուրում, Մեղրիում ու Ղարաբաղում տարածված մի , հիվանդության , մասին, որը հայտնի է Խըլլացակ կամ Խողլացակ անունով /խաղէ/ Խըլլ՝ պար ցակ բառարմատներից :

Հիվանդությունն այսպես է կոչվում այն պատճառով, որ դիվանարկածին՝ շարով ընկածին, օրոժում են պարով ու երաժշտությամբ : Դա արկել է խիստ զաղոտնի, առանց ժամանակի պայմանավորվածության և առանց տարիքի ու սեռի ընտրության : Արարողությունը տեղի է ունեցել նվիրատվությամբ և մեծ հյուրասիրությամբ :

Խաղլացակի վերաբրուկները և դրանց մասին վկայությունները, կապված որոշակի գեղեցերի հետ, պահպանվել են մինչև 20-րդ դարի երկրորդ կեսը, անզամ մինչև Հայրենական մեծ պատերազմը, իսկ հիշողությունները, վկայություններն ու քաժանան նպատակով որոշ գործողությունները՝ մինչև մեր օրերը :

#### Է. Խ. ՊԵՏՐՈՎՍՅԱՆ

ՀՍՍՀ ԱՇՏԱՐԱԿԻ ՇՐՋԱՆԻ ՀԹԽՈՒ-ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՈՒՍՈՒՄՆԱՀԻ-  
ՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

Արդի հասարակության էթնիկական պրոյեսների պրոբլեմատիկայի հարցում մեծ տեղ է զբաղեցնում ազգային կողմնորոշումը, որի դրսեփորման կարևոր միջոցներից մեկը ժողովրդական մշակույթին է : Ներկա դեպքում մեր ուսումնասիրության առարկան երաժշտությունը, պարագաստը, ժողովրդական թատրոնը և ինքնագործունեությունն է :

Ուսումնասիրության նպատակն է.

1. Բացահայտել ավանդական մշակույթի տարբեր ձևերի պահպան-վածությունը տարբեր հասակային սոցիալական խմբերում :

2. Պարզել ազգագույն խմբերի ավանդական մշակութային փոփոխման աստիճանը և զարգացման ուղղությունները ժամանակակից պայմաններում :

3. Պարզել գյուղական ընակչության կողմնորոշումը ժողովրդական ու պրոֆեսիոնալ մշակույթի նկատմամբ :

Աշխատանքը կատարնել է Աշտարակի շրջանում ապրող ազգագրական տարբեր խմբերի հետ: Պարզել է հետևյալը. քուրո խմբերը պահ-